


2017



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ 1(24) — 2017

ISSN 1829-2941

Ժողովածուն երաշխավորված է հրատարակության Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Լ. Հ. Կարապետյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
(նախագահ)

Է. Ա. Բաբայան (պատասխանատու քարտուղար), աշխ.գիտ.թեկնածու, պրոֆեսոր

Յու. Մ. Սուվարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Վ. Լ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ տնտեսագիտության դոկտոր,  
պրոֆեսոր

Բ. Հ. Եղիազարյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ա.Հ.Բայադյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Վ. Բ. Բոստանջյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Է.Ս.Ղազարյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ս.Ս.Մկրտչյան, պատմական գիտությունների դոկտոր., պրոֆեսոր

Ս.Ս. Խուդոյան, հոգեբանական գիտությունների դոկտոր., պրոֆեսոր

Ա.Շ.Մելիքյան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ռ.Ն.Ազարյան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս.Ս.Մելիքյան, տնտեսագիտության թեկնածու

Բ.Վ.Գաբրիելյան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

### ***Թողարկման պատասխանատու խմբագիրներ***

Կ. Հ. Առաքելյան, տնտեսագիտության թեկնածու

Ս. Ա. Գևորգյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ք.Ա.Հարությունովա, բանասիրական գիտությունների թեկնածու /անգերեն/  
Ժողովածուն օգտակար կլինի համապատասխան մասնագիտություններով  
ուսուցանվողների, տեսագործական հիմնախնդիրների հետազոտությամբ զբաղվող,  
ինչպես նաև կառավարման համակարգում աշխատողների համար: Հոդվածներում  
առաջադրված խնդիրները, դրանց շուրջ դատողություններն ու առաջարկված  
լուծումները արտահայտում են հեղինակների անձնական մտեցումները, որոնք  
կարող են նաև չհամընկնել խմբագրական խորհրդի դիրքորոշումներին: Ժողովածուն  
ընդգրկում է Համալսարանի, ինչպես նաև այլ կազմակերպություններում  
աշխատողների և հետազոտողների հոդվածներ: Ժողովածուի հոդվածներն ըստ  
իրենց ոլորտային ուղղվածության առանձնացված են երկու բաժիններում՝ 1)  
Տնտեսագիտություն և հանրային կառավարում, 2) Հոգեբանություն,  
մանկավարժություն և պատմություն:

Ժողովածուն օգտակար կլինի համապատասխան մասնագիտություններով  
ուսուցանվողների, տեսագործական հիմնախնդիրների հետազոտությամբ

զբաղվող, ինչպես նաև կառավարման համակարգում աշխատողների համար:  
Հողվածներում առաջադրված խնդիրները, դրանց շուրջ դատողություններն ու  
առաջարկված լուծումները արտահայտում են հեղինակների անձնական  
մոտեցումները, որոնք կարող են նաև չհամընկնել խմբագրական խորհրդի  
դիրքորոշումներին:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

#### ԲԱԺԻՆ 1. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱԵՎԱՌՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐ-  
ՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Կարինե Զուրաբյան

Դեռևս անցյալ դարի կեսերից տնտեսապես զարգացած երկրներում հաշվապահական հաշվառումը բաժանվել է երկու ճյուղերի. ֆինանսական և կառավարչական հաշվառման, որոնք թեև փոխկապակցված են միմյանց հետ և զարծում են զուգահեռաբար միևնույն հաշվային հասնակարգում, սակայն հանդես են գալիս իրենց ուրույն ֆունկցիանալ առանձնահատկությամբ:

Ֆինանսական հաշվառումը կարգավորվում է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՄ-ներով): Վերջինները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խափարի (ՀՀՄՄԽ) կողմից ընդունված ստանդարտներն են և լցանց մեկնաբանությունները: ՀՀՄՄԽ-ն հանձն է առել նվազեցնել տարբեր երկրների կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների միջև եղած տարբերությունները՝ աշխատելով ներդաշնակեցնել ֆինանսական հաշվետվությունների պատրաստմանը և ներկայացմանը վերաբերող կարգավորումները, հաշվապահական հաշվառման ստանդարտներն ու ընթացակարգերը:

ՖՀՄՄ-ները ներառում են՝

- ա) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (ՖՀՄՄ),
- բ) Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (ՀՀՄՄ),
- գ) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների մեկնաբանությունների կոմիտեի (ՖՀՄՄԿ) կամ նախկին Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) կողմից մշակված մեկնաբանությունները:<sup>1</sup>

Բացի ՖՀՄՄ-ներից ՀՀՄՄԽ-ն ընդգրկել էր նաև «ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքները»: Սակայն 2010թ. սեպտեմբերին նրա կողմից կրասպարկվեց «Հայեցակարգային հիմունքներ» փաստաթուղթը, որը փոխարինեց «ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքներ» փաստաթղթին:

<sup>1</sup> ՀՀՄՄ 1 «ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»

Այնուամենայնիվ «Հայեցակարգային հիմունքներ» փաստաթուղթը չի հանդիսանում ՖՀՄՍ և, հետևաբար, չի սահմանում ստանդարտ սրևէ մասնավոր չափման կամ բացահայտման հարցում, չի գերակայան սրևէ կանկրետ ՖՀՄՍ-ի նկատմամբ և, եթե լլլանց միջև առաջանում է սրևէ հակասություն, ՖՀՄՍ-ի սրահանջները գերակայան են «Հայեցակարգային հիմունքներ» փաստաթղթի սրահանջներին:

Ֆինանսական հաշվառման կաղմից տեղծվալ տեղեկատվության ձևավորմանը բխան է ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի սրահանջից, լլլը տահմանում է Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր սրահանջները, լլլանց կառուցվածքի վերաբերյալ ցուցանները և բովանդակության նկատմամբ նվազագույն սրահանջները:

Ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության Ֆինանսական վիճակի և Ֆինանսական աղյուներների հանակարգված ներկայացումն են: Ֆինանսական հաշվետվությունների նպատակը կազմակերպության Ֆինանսական վիճակի, Ֆինանսական աղյուներների և լլլանական միջոցների հարքերի վերաբերյալ տեղեկատվության տրամաղլլանն է, լլլն օգտակար է օգտագործալների լլլայն շրջանակների կաղմից տնտեսական լլլաշաններ կայացներլլա հանար:

Ֆինանսական տեղեկատվության օգտագործալներն են.

- ներկա և սրտենցիալ ներղլլալները,
- կառավարչական անձ նակազնը և աշխատալները,
- մատակարարները և գնաղլլները,
- վախատոռները,
- սլետական մարմինները,
- հասղլլակաղլլանը,
- Ֆինանսական հաշվետվությունների աղ օգտագործալները:

Ֆինանսական հաշվետվությունների անբաղջական փարքերը ներառում է՝  
ա) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվաղլլանը՝ ժանանակաղլլջանի վերջի լլլաղլլանը.

բ) Հանարարիակ Ֆինանսական աղյուներների մասին հաշվետվաղլլանը՝ տղլլալ ժանանակաղլլջանի հանար.

գ) Մեղլլական կաղլլաղլլան փաղլլաղլլանների մասին հաշվետվաղլլանը՝ տղլլալ ժանանակաղլլջանի հանար.

ղ) Գղլլանական միջոցների հարքերի մասին հաշվետվաղլլանը՝ տղլլալ



ժամանակաշրջանի համար:

ե) Ծանոթագրությունները, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի նասերի վերաբերյալ հանառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:<sup>1</sup>

Ֆինանսական հաշվետվությունները տրամադրված են տեղեկատվություն հաշվետու կազմակերպության տնտեսական ռեսուրսների, նրա նկատմամբ ներկայացված պահանջների, ինչպես նաև գործարքների, այլ դեպքերի և հանգամանքների ազդեցության նասին, որոնք փախուխտ են այդ ռեսուրսները և պահանջները:

Եթե ֆինանսական տեղեկատվությունն օգտակար է, այն պետք է լինի տեղին և ճշնարիտ ներկայացնի այն, ինչը նպատակադրվել է ներկայացնել: Այսինքն, ըստ «Հայեցակարգային հիմնադրեր» փաստաթղթի, ֆինանսական տեղեկատվության հիմնարար որակական բնութագրերն են՝ տեղին լինելը և ճշնարիտ ներկայացումը: Համադրելիությունը, հավատարմությունը, ժամանակին լինելը և հասկանալիությունը որակական բնութագրեր են, որոնք բարելավում են տեղին և ճշնարիտ ներկայացված տեղեկատվության օգտակարությունը: Բարելավող որակական բնութագրերը կարող են նաև օգնել որոշելու, թե երկու եղանակներից որը պետք է կիրառվի որևէ երևույթ նկարագրելու համար, եթե այդ երկուսն էլ հավասարապես տեղին են և ճշնարիտ ներկայացված:<sup>2</sup>

ՀՀՄՄ 1-ում ներկայացված են այն հիմնական հատկանիշները և սկզբունքները, որոնց հիման վրա կազմակերպությունը պետք է վարի ֆինանսական հաշվառումը և ներկայացնի ֆինանսական հաշվետվությունները:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է ճշնարիտ ներկայացնեն կազմակերպության ֆինանսական վիճակը, ֆինանսական արդյունքները և դասնական միջոցների հասքերը: Դճնարիտ ներկայացումը պահանջում է գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ճիշտ ներկայացում՝ ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի համար Հիմնադրերում տրված սահմանումների և ճանաչման չափանիշների համաձայն: Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի կազմակերպության անընդհատ գործելու կարավարքան գնահատում: Անընդհատության ենթադրության տեղին լինելը

<sup>1</sup> ՀՀՄՄ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»

<sup>2</sup> «Հայեցակարգային հիմնադրեր»

զնահատելու համար ղեկավարությունը հաշվի է առնում տեսանելի ապագային վերաբերող հասանելի անբաջ տեղեկատվությունը, որն ընդգրկում է հաշվետու ժամանակաշրջանից հետո ոչ պակաս, քան տասներկուամսյա ժամանակաշրջան:

Կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դասնական միջոցների հարքերի մասին տեղեկատվության՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների տարրերը, երբ դասը բավարարում են Հինունքներում սահմանված այդ տարրերի սահմանմանը և ճանաչման չափանիշներին:

Կազմակերպությունը համանման հարվածների յուրաքանչյուր էական դաս միասնականության սկզբունքի հիման վրա պետք է ներկայացվի առանձին: Տարբեր բնույթի և գործառույթի հարվածները պետք է ներկայացվեն առանձին, բացառությամբ այն դեպքերի, երբ դասը էական չեն:

Այն չպետք է հաշվանցի ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև եկամուտները և ծախսերը, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցումը պահանջվում կամ քայլադրվում է ՖՀՄՄ- ներով:

Կազմակերպությունը պետք է ֆինանսական հաշվետվությունների անբաջական փաթեթը (ներառյալ հանապուհի տեղեկատվությունը) ներկայացնի առնվազն տարին մեկ անգամ: Այն պետք է պահպանի ֆինանսական հաշվետվությունների հարվածների ներկայացումը և դատակարգումը (հանապուհվածությունը) մի ժամանակաշրջանից մյուսը, բացառությամբ այն դեպքերի, երբ՝ ա) պարզ է, որ նշանակալի փոփոխության է տեղի ունեցել կազմակերպության գործառնությունների բնույթում, կամ նրա ֆինանսական հաշվետվությունների վերաժառանգումը ցույց է տալիս, որ մեկ այլ ներկայացում կամ դատակարգում կլինի ավելի տեղին, կամ բ) ներկայացման փոփոխությունը պահանջվում է ՖՀՄՄ-ներով:

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր կազմակերպության գործունեության վերջնական նպատակը շահալի մարքսի մարտնչությունն է, որին հասնելու համար այն կամ պետք է առավելագույնի հասցնի իրացման ծավալները, կամ էլ նվազագույնի՝ կատարված ծախսերը: Մակայն խիստ սրճակցության պայմաններում կազմակերպությանն առավել մեծ հաջողության կարգով է հասնել ծախսերի մեծության կրճատման միջոցով, ինչն, իր հերթին, պահանջում է իրականացնել խիստ



վերահսկողության դրանց նկատմամբ կառավարչական հաշվառման կողմից տրանսպարենտ անհրաժեշտ տեղեկատվության հիման վրա:

Սովորաբար կառավարչական հաշվառումը բնութագրվում է որպես կազմակերպության գործունեության գնահատման, պլանավորման և վերահսկման նպատակով կառավարիչների կողմից օգտագործվող տեղեկատվության հավաքման, մշակման, համակարգման, չափման, վերլուծության և մեկնաբանման գործընթաց: Կառավարչական հաշվառմամբ զբաղված հաշվապահի դերը Ֆինանսական հաշվառում իրականացնող հաշվապահի դերից տարբերվում է նրանով, որ Ֆինանսական հաշվապահի խնդիրը հանգում է արտաքին օգտագործողների համար Ֆինանսական վիճակի վերաբերյալ հաշվետվությունների կազմմանը, մինչդեռ կառավարչական հաշվապահը կազմված է բավարարելու կառավարիչների տեղեկատվական ներքին պահանջները:<sup>1</sup>

Կառավարչական հաշվառման իրականացումն է ներքին օգտագործման տեղեկատվության հավաքագրում, մշակում և հաշվետվությունների ձևով ներկայացում: Այս տեղեկատվությունն անհրաժեշտ է կազմակերպության կառավարիչներին համապատասխան որոշումներ կայացնելու համար: Կառավարչական հաշվառումը տեղեկատվություն է տալիս բոլարկվող արտադրանքի, արտադրական պրոցեսների և ներտնտեսված այլ ակտիվների ինքնարժեքի վերաբերյալ:<sup>2</sup>

Քանի որ տնտեսական գործունեության վերջնական նպատակը շահույթի ստացումն է, կառավարչական հաշվառման կողմից ավելի հաճախ ուսումնասիրվում է բոլարկվող արտադրանքի ինքնարժեքը:

Կառավարչական հաշվառման ուսումնասիրման օբյեկտ են հանդիսանում արտադրական ծախսումները և դրանց փոփոխությունը: Վերջինիս վերլուծության արդյունքում սկնհայտ են դառնում այն ուղիները, որոնք բայլ կտան նվազեցնել արտադրական ծախսումների մեծությունը, ըստ այդմ՝ արտադրանքի ինքնարժեքը: Կառավարչական հաշվապահի պարտականությունների լայն շրջանակը ներառում է տեղեկատվության կազմումն ու ներկայացումը կառավարման բոլոր օղակների կառավարիչներին, ինչը պահանջում է մանազիտական գիտելիքներ և կարողություններ: Այդ տեղեկատվությունը օգտագործվում է հետևյալ նպատակներով՝

<sup>1</sup> Վ.Т. Хорнгрев, Дж. Фостер, Бухгалтерский учет: Управленческий аспект, Москва 2000, стр. 8-11.

<sup>2</sup> В. Б. Изашкевич, Бухгалтерский управленческий учет, Москва 2004, стр. 22-27.

- սլանավորման,
- որոշումների կայացման,
- սոնիտորինգի և վերահսկողության:<sup>1</sup>

Կառավարչական հաշվառման միջոցով հաշվառվում են այն բոլոր ծախսումները, որոնք ձևավորում են արտադրանքի ինքնարժեքը, նկատարվում են ծախսումների հաշվառման հանակարգերն ու մեթոդները:

Հենց այս հաշվառման միջոցով է ստացվում այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է կազմակերպության տնտեսական գործունեության վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Կառավարչական հաշվառման վերջնական նպատակը կազմակերպության գործունեության կառավարումը և վերահսկողության հաստատումն է:<sup>2</sup>

Կառավարչական հաշվառման ակտիվորեն մասնակցում է բյուջետավորման գործընթացին՝ նախանշելով գործառնություններն ու ժամանակացույցերը և կողմիցնացնելով առանձին բյուջեներն ընդհանուր բյուջեի հետ:

Ելնելով կառավարող օրգանների առջև դրված խնդիրներից՝ ձևավորվում են կառավարչական հաշվառման հետևյալ ենթահասակարգերը՝

1. արտադրանքի ինքնարժեքի ձևավորման,
2. ծախսումների հաշվառման և կալկուլյացիայի,
3. արտադրության ծախսումների փոխախության հաշվառման,
4. շահութաբերության շեմի որոշման,
5. ծախսումների վերլուծության և ծրագրավորման:

Առանձնացված բոլոր ենթահասակարգերը լրացնում են մեկը մյուսին և ուղղված են բիզնեսի հիմնական նպատակի՝ շահույթի ապահովմանը:<sup>3</sup>

Այսպիսով, կառավարչական հաշվառումը հանակարգ է, որը մի կազմակերպության շրջանակներում նրա կառավարչական անձնակազմին ապահովում է ինչպես կազմակերպության որպես մեկ անբաժանելի, այնպես էլ նրա առանձին տնտեսաբանականների կառավարման (սլանավորման, վերահսկողության և կարգավորման) համար անհրաժեշտ տեղեկատվությամբ: Այս գործընթացը ներառում է տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն, նախապատրաստում, մեկնաբանություն, տրամադրում և ստացում, որն անհրաժեշտ է կառավարող անձնակազմին իրենց գործա-

<sup>1</sup> Գալտոյան Մ. «Ինքնարժեքի հաշվառում», Երևան, Տիգրան Մեծ 2003թ., էջ 8

<sup>2</sup> О.Н. Волкова, Управленческий учет, Москва 2005, стр. 28-29.

<sup>3</sup> Ա. Սարգսյան, Ռ. Հանրաբնույթի և ուրիշներ, Հաշվառման կառավարում: Ուսումնական ձեռնարկ, Երևան 2009, էջ 459-460

ույթներն իրականացնելու համար: Կառավարչական հաշվառումը տեղեկատվություն է ներկայացնում արտադրական պրոցեսների, արտադրված արտադրանքի, ներստեղծված այլ ակտիվների ինքնարժեքի վերաբերյալ, որոնք արտացոլվում են ֆինանսական հաշվետվություններում և օգտագործվում են կառավարչական որոշումներ ընդունելու նպատակով:

Ֆինանսական և կառավարչական հաշվառումների միջև տարբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Աղյուսակ 1

**Ֆինանսական և կառավարչական հաշվառման համեմատական բնութագիրը<sup>1</sup>**

Դատակարգման հայտանիշները	Ֆինանսական հաշվառում	Կառավարչական Հաշվառում
Գլխավոր օգտագործողները	Հիմնականում արտաքին օգտագործողները	Կազմակերպության կառավարչական անձնակազմը
Հաշվառումը վարելու նպատակը	Ֆինանսական հաշվետվությունների կազմում արտաքին օգտագործողների համար	Կառավարչական գործընթացների ապահովում՝ կազմակերպության ներքսում
Հաշվառումը վարելու մեթոդների ընտրության ազատությանը (հնարավորությունը)	Սահմանափակված է հաշվապահական հաշվառումը վարելու համար օրենսդրությանը հատուտված իրավական ակտերով, հաշվապահական տնտեսաբաններով, պահանջվում է օրինքով	Որևէ սահմանափակում չկա, բացառությամբ արժեքի, որոնք հասնողվում են առավել արդյունավետ կառավարչական որոշումների ընդունումից տուգվելիք եկամուտների հետ, չի պահանջվում օրենքով
Հաշվառման հստակագրը	Կրկնակի գրանցում	Ցանկացած օգտակար հստակագր
Ժամանակային առկելտը	Ուղղված է դեպի անցյալը	Ուղղված է դեպի ապագան
Ժամանակաշրջանը	Մովիդաբար ամիս, եռամսյակ, տարի	Ցանկացած
Զտիման միավորը	Դրամական	Ցանկացած
Տեղեկատվության բաժանցիկության (բաց լինելու) աստիճանը	Չի հստակաանում առևտրային գաղտնիք: Հանդիսանում է բաց, հրատարակային	Հանդիսանում է առևտրային գաղտնիք, ենթակա չէ հրատարակման
Տեղեկատվության նկատմամբ հիմնական պահանջները	Առավել ճշգրիտ	Առավել արագ տրամադրելի

Ամփոփելով վերոնշյալը պարզ է դառնում, որ ժամանակակից շուկայական տնտեսության պահանջներում կազմակերպությունների

<sup>1</sup> «Հաշվապահական հաշվառում» ուսումնական ձեռնարկ, Կարինե Զուրաբյան, Քննարկի Միջազգայնյան, ՀՈՒՄԿ հիմնադրամ, Երևան 2012, ՀՈՒՄԿ հիմնադրամ, էջ 14

համար կենսական նշանակություն ունի քե՛ ֆինանսական, քե՛ կառավարչական հաշվառման իրականացումը:

**Ֆինանսական և կառավարչական հաշվառման առանձնահատկությունները կազմակերպություններում**

**Կարինե Զուրաբյան**

**Համառոտագիր**

Դեռևս անցյալ դարի կեսերից տնտեսապես զարգացած երկրներում հաշվապահական հաշվառումը բաժանվել է երկու ճյաղերի. ֆինանսական և կառավարչական հաշվառման, որոնք քեև փոխկապակցված են միմյանց հետ և գործում են զուգահեռաբար միևնույն հաշվային համակարգում, սակայն հանդես են գալիս իրենց առայն ֆանկցիոնալ առանձնահատկություններով: Արժանավատ հաշվառում վարելու համար նախ և առաջ անկասժեշտ է հասկանալ պատկերացումը յուրաքանչյուրի կազմից ներկայացվող տեղեկատվության առանձնահատկությունը:

Հիմնաբառեր՝ Ֆինանսական հաշվառում, կառավարչական հաշվառում, ՖՀՄՄ-ներ, հաշվետվության, տեղեկատվության այրուսթյան օգտագործալներ, ներթյան օգտագործալներ

**Особенности финансового и управленческого учета в организациях**

**Каринэ Зурабян**

**Резюме**

Еще в середине прошлого века в развитых странах произошло разделение бухгалтерского учета на финансовый учет и управленческий учет. Хотя оба вида учета взаимосвязаны и параллельно функционируют в единой учетной системе, тем не менее они имеют свои функциональные особенности. Для осуществления достоверного учета в первую очередь следует понимать особенность информации, предоставляемой ими.

**Ключевые слова:** финансовый учет, управленческий учет, МСФО, отчетность, внешние пользователи информации, внутренние пользователи.

**Specificities of Financial and Managerial Accounting in organizations**

**Karine Zurabyan**

**Summary**

Since the mid-20th century, in economically developed countries accounting was divided into two branches: financial accounting and managerial accounting. Although these two are interconnected and operate simultaneously in the same accounting system, however they act with their unique functional peculiarities. To run a reliable accounting, we need to first of all understand the particularity of the information provided by each of branch of accounting.

**Keywords:** financial accounting, managerial accounting, IFRS, statement, external users of financial information, internal users.